

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մի տարի է, որ Հայաստանի մշակոյ-
քը անօրինակ տագնապ է ապրում. բոլ-
շեւիկեան կոպիտ ցախաւելը շարունա-
կում է աւեր գործել: Այ. Բակունց, Գ.
Մահարի, Վ. Թորոզեան, Դր. Տէր -
Սիմոնեան, Վ. Նորենց, Ալազան, Վա-
նանդեցի — խորհրդային գրականու-
թեան երէկայ գարդերը դեռ բանտումն
են: Բայց հայածանփը այդքանով չի
վերջացած. անընդհատ մաքրագործում
են գրականութեան բոլոր անկիւնները:
Այս տեսակէտից, առանձնապէս ուշա-
գրաւ է Հայաստանի Գրողների Միու-
թեան այն ընդհանուր ժողովը, որ տե-
ղի ունեցաւ ապրիլ 17 - 21-ին. «Այսպի-
սի ժողով առաջին անգամն է տեղի ու-
նենում երեւանում», իրաւամբ ցկա-
տում է «Գրակ. Թերթ»-ը (23 ապր.):

Այդ ժողովը վարելու համար յատկա-
պէս Մոսկւայից ուղարկելի է ոուս բոլ-
շեւիկ գրող Վ. Կիրպուտինը, որ մի
ընդարձակ ճառով քննութեան է ենթար-
կել հայ գրականութեան անցեալն ու
ներկան եւ հրահանգներ տւել հայ գը-
րողների հետեւելիք վարքագծի համար:
Կիրպուտինի դատողութիւնները հայոց
գրականութեան անցեալի վերաբերմամբ
կարող ենք մի կողմ դնել. աւելի կարե-
ւոր է նրա դատն ու դատաստանը ներ-
կայի եւ ապագայի մասին: Ներկա-
յումս ամէն կողմ վնասարարութիւն.
«Սիմոնեանը, Բակունցը, Ալազանը եւ
ուրիշները, գրականութեան մէջ, գոր-

ծել են որպէս վնասարարներ, որպէս
հակայեղափոխականներ, որպէս տրոց-
կիստներ, դաշնակներ, որպէս միջազ-
գային կապիտալի գործակալներ, որ-
պէսզի հայ ժողովրդին շեղէին երջա-
նիկ կեանքի ուղուց եւ վերադարձնէին
անցեալում նրա ապրած բոլոր սար-
սափներին»: *)

Բայց այսօր արդէն սահմանափակ-
ում վնասարարների թիւը. Կիրպուտի-
նը բռնում է եւ Եղիշէ Չարենցի օձիքը.
«Վտանգաւոր ուղու վրա է գտնում այ-
ժըմ — այդ մասին պէտք է ասել ամ-
բողջ ձայնով — Չարենցը ... Չարենցը,
որպէս պոէտ, իր ստեղծագործութիւնն
սկսեց յուսահատութեան երգերից: Նրա
առաջին երգերը լի են խաւարով»: Ա-
պա՛ Չարենցը «լսեց յեղափոխութեան
կանչը եւ անցաւ նրա կողմը»: Հետե-
ւանքը եղաւ՝ Չարենցի «ստեղծագոր-
ծութեան յաջողութիւնը, եւ փառք բե-
րեց նրա համար»: Բայց «նա ուղիկալ
ինտելիգենտ էր անցած յեղափոխու-
թեան կողմը եւ ոչ թէ մի մարդ, որը
լիովին ձուլւել էր պրոլետարիատի շար-
քերի մէջ»: Չարենցը ժխտում է «կուլ-
տուրական ժառանգութիւնը», «ամբող-
ջապէս ժխտում է այն, ոչնչացնում է

*) Այս եւ Հետագայ բոլոր մէջըն-
բումները ստուած են «Գրական Թեր-
թ»-ի 23 ապր. եւ 1 մայիս համարնե-
րից:

ամբողջ հինը, այդ քուստ եւ ա՛յն, ինչ ստեղծել է ժողովուրդը եւ մեծ գրողները»: Իսկ «հետագայում Չարենցն ընկնում է հակայեղափոխական նացիոնալիստների ազդեցութեան տակ»: «Նա ստեղծում է մի գիրք («Գիրք նամապարհին»), որն ամբողջապէս գրած է որպէս հայ գրականութեան «ազգային յատկանիշների խտացման» քեռրիայի պատկերացում»:

Թէ ի՛նչ է այդ «ազգային յատկանիշների խտացման» տեսութիւնը, Կիրպոտիկի ասելով, Այ. Բակունցը դատական ֆննիչին տւած իր ցուցմունքներում բնորոշել է հետեւեալ կերպով. «Մեր խմբակի գործույթիւնը, ամբողջովին վերցրած, ուղղւած էր Համ. կուսակցութեան ազգային ֆաղափականութեան դէմ եւ ի հակակշիռ կուսակցութեան «ձեռով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրա» լոզունգի, մենք պաշտպանում էինք «ազգային յատկանիշների խտացման» քեզիսը. ֆաղափականապէս այդ նշանակում էր «ձեռով ազգային, բովանդակութեամբ նացիոնալիստական կուլտուրա»:

Ապա, առաջ բերելով «կուլտուրական ժառանգութիւնը ժխտող», «ամբողջ հինը ոչնչացնող» Չարենցին հետեւեալ կտորը —

*Թո՛ղ հուրհուրա իմ դրբում ձեր ողու
ցուք լուսէ,
Թո՛ղ երգերում իմ այսօր, խօսքերում
իմ՝ ձեր ջանքը ետայ,
Ո՛վ մեծ վարպետներ, իմ թախան-
ձանքը լսէք,
Չեր անմահ կեիքը դրէք իմ անձար
երգերի վրա... —*

— Կիրպոտիկը յայտնում է, որ՝ «Չարենցի վերաբերմամբ, չնայած նրա բոլոր սխալներին, հայ խորհրդային հասարակայնութիւնը, հայ ժողովուրդը ցուցաբերել են հիանալի համբերատա-

րութիւն եւ մեծահոգութիւն», բայց նա շահագործել է այդ վստահութիւնը: Այժմ, մի վերջին անգամ, Մոսկւայի լիազօրը առաջարկում է հայ բանաստեղծին քողնել «հակայեղափոխական հասիւնը» եւ դուրս գալ «լուսատար ուղի»: «ուղղելու ուղին Չարենցի համար փակւած չէ»:

Չարենցին աֆացում է եւ Ա. Ռուկերչեանը, քե՛ «Չարենցը մեծ յանցանքներ է գործել ժողովրդի նկատմամբ, նա մասնակից է եղել հակայեղափոխական — նացիոնալիստների գործունէութեան»: Ելոյթ ունեցող ուրիշ գրողներ էլ խօսել են Չարենցի դէմ:

Չարենցի դէպքը եզակի չէ. Հայաստանի գրողների ընդհանուր ժողովում «մերկացեցին» կամ դատապարտեցին նաեւ շատ ուրիշ գրողներ: Յիշենք միայն մի ֆանի օրինակ: Այսպէս՝ գրող Արազին կասկածի տակ է դնում *Դեր. Դեմիրճեանին*, որի համար «միմչեւ այսօր էլ պարզ չէ ազգային ձեւի խնդիրը», Ռ. Չարեանը՝ «մէկը մեր երիտասարդ ֆննադատներից, որոնք ոչ այնքան հեռու անցեալում խնկարկել են Բակունցի եւ Ալազանի նման նացիոնալիստ — հակայեղափոխականների գրական «ստեղծագործութիւնները», խօսում է «իբր կատարած սխալների մասին» եւ մեղա՛ է կարդում: Չարէլ Եսայեանը ծանրանում է «գրական կազմակերպութեան նացիոնալիստական — տրոցկիստական նախկին ղեկավարութեան մեր գրականութեան հասցրած չարիքների վրա» եւ, ի միջի այլոց, պահանջում է, որ «գրողն ինքը ստեղծագործելիս պէտք է անկեղծ լինի»: Չարէլ Եսայեանն եւ անկեղծութիւն... Տիկիկը զարմանքով հարցնում է. «Ինչո՞ւ մեր գրողներից շատերը խուսափում են գրելու ժամանակակից քեռտանների շուրջը, ինչո՞ւ նրանց յաջողում է աւելի շատ բացասական տիպեր տալ, քան դրական»: Հետաքրքրական է, որ

Զ. Եսայեանը ինքն էլ «խուսափում է գրելու ժամանակակից բեմաների շուրջը» եւ գրադամ է անցեալի յուշերը քրքրելով...

Բանաստեղծ Ս. Տարոնցին, ժողովի առջեւ խոստովանում է «իր ստեղծագործութեան մէջ քոյլ տրամ մի շարք նացիոնալիստական սխալները: Կանգ է առնում հակայեղափոխական նացիոնալիստ Ալազանի եւ Նորենցի հետ միասին «Գրական Թերթ»-ում վարած նացիոնալիստական ֆազակականութեան վրա»: Բայց, «հետագայում ելոյթ ունեցող ընկերները իրաւացիօրէն գտան, որ Տարոնցին աւելին կարող էր ասել իր սքալաների, հակայեղափոխական սրիկաներ Ալազանի եւ Նորենցի մասին, որոնց հետ երկար ժամանակ չափազանց սերտ կերպով կապւած է եղել»:

Արաբը, Ոսկերչեանը եւ ուրիշներ խոստօրէն դատապարտում են *Մկրտիչ Արմէնի* «ռեակցիոն ոռմանտիզմը», «գոռոպիւնն ու մեծամտութիւնը», արտայայտած հակախորհրդային տեսակետները: Մ. Արմէնը վարդի գոյներով նկարագրել է հին Գիւմրին, ինչ որ բուշեւիկեան հասկացողութեամբ ծանր յանցանք է. պէտք է անցեալը միշտ սեւ ցոյց տալ, որպէսզի խորհրդային ներկան ներմակ երեսայ:

Անողոք ֆննդատուութիւնների եւ յարձակումների ենթարկւեցին նաեւ ուրիշներ. ինչպէս Ա. Յովհաննիսեանը, Մ. Նալբանդեանի մասին գրած գրքի համար, Կ. Մելիք - Օհանջանեանը, Վ. Թէրզիբաշեանը, Ս. Սողոմոնեանը, Սուրբաթեանը, Կարինեանը, Պետրասի ղեկավար *Չոփուրեանը* եւ ուրիշներ: Իր գոեհիւրեանք առանձնապէս զգւելի է Սիմ. Յակոբեանի ելոյթը: Նա «Գրողների Միութեան եւ գրողների ուշադրութիւնն է հրաւիրում դէպի դրարոցները: Այնտեղ աւանդում է գրականութիւն, չգիտենք, թէ ովքեր են այդ

ուսուցիչները, ինչպէ՞ս են աւանդում գրականութիւնը: Այդ առանձնապէս կարեւոր խնդիր է, որովհետեւ մեր նախկին դասագրքերը լիքն էին նացիոնալիստական տիպի սխալներով:

«Ընկ. Ս. Յակոբեանը դնում է եւ մի ուրիշ կարեւոր հարց եւս. դա լրսես հակայեղափոխական Գր. Սիմոնեանի եւ Ն. Սուեփանեանի գլխաւորած տերմինաբանական յանձնաժողովի որոշումների վերանայումն է: Պէտք է վերանայել այդ որոշումները եւ փոխել մի քանի կէտեր:

«Խօսելով դասագրքերի մասին՝ ընկ. Ս. Յակոբեանը նշում է, որ Չարեցը դասագիրք էր կազմել, բայց այդ դասագրքից հանել էր ոռւսական եւ եւրոպական գրողներին, մի խօսքով՝ օտար հինգակների գրածները»:

Հարց է առաջ գալիս. ո՞ր էր Ս. Յակոբեանը երէկ, երբ Գր. Սիմոնեաններն ու Չարեցները «ի պատի» էին, ինչո՞ւ էր լռել եւ ինչպէ՞ս չի ամաչում այդպէս խօսել այժմ, երբ Սիմոնեանները բանտում են, իսկ Չարեցները՝ հարածի տակ առնած:

Համագումարում առանձին տեղ է բռնում Ա. Իսահակեանի պարագան: Ինչպէս յայտնի է, արտասահմանում նա էլ «տրոցկիստ» էր, համակրում եւ գաղափարական ու բարեկամական կապերով կապւած էր հանցեանի, Ալ. Բակունցի, Գ. Մահարիի, Ալազանի եւ ուրիշների հետ՝ Փարիզի սրճարանները ասպարէզ դարձնելով «հակայեղափոխական ելոյթների»: Երբ այլեւս Փարիզ մնալը դարձաւ անկարելի — պահանջում էին վերադառնալ Երեսան եւ սպառնում էին կտրել ամսականը — սրտի ծանր կծկումներով գնաց Հայաստան: Անշուշտ, եթէ ապրուստի փող վնասող մէկը գտնուէր, կը գերադասէր մնալ արտասահմանում:

Փող տուղ չի գտնւել, եւ Ա. Իսահ

հակեանք գնաց եւ ... ահա՛ կիրպոտի-
նի բացագանչութիւնը. «Իսահակեանը
նստած է այստեղ, մե՛զ հետ, մեր շար-
քերում»: Ու Մոսկուայի լիագօրը փա-
ռաբանում է «Արու Լալայի» հեղինա-
կին, որ, վերջապէս, գտել է իր տեղը:
Այն պահուն, երբ իր գաղափարակից եւ
ընկեր Բակունցները, Ալագաններն ու
Մահարիները բանտում են, մահւան
պատանակիքի ներքոյ, երբ իր մտերիմ
Չարեմցի գլխին շանք ու կայծակ են
բափում, երբ ողջ Հայաստանի գրա-
կանութիւնն ու գրողները նետած են
Ստալինի ու Բերիայի կոշտ կրունկների
տակ, Ա. Իսահակեանը բարոյապէս
հնարաւոր է համարում մի երկար գը-
րութիւն ուղղել «ժողովին՝ դնելով այդ
գրութեան վերնագիրը «Իմ ազատ եւ
ստեղծագործ ժողովրդի հետ»: Ինչքան
պէտք է բացած լինեն մարդու բարո-
յական ըմբռումները՝ գրելու համար
նման մի քուղք ա՛յն մթնոլորտում, ու-
րի մէջ տեղի էր ունենում Հայաստանի
գրողների ժողովը: Չարեմցը գէթ լսե-
լու առաջինութիւնը ունեցաւ: Նա, ինչ-
պէս վկայում է «Գր. Թերթը», «նոյն
իսկ չլսանակեց ժողովին եւ լռութիւն
պահպանեց»: Իսկ Իսահակեանը այդ-
քան տարրական առաջինութիւնից էլ
գուրկ դուրս եկաւ եւ մի աման ոսպի
համար ծախեց ե՛ւ իր միտքը, ե՛ւ խիղ-
նը, ե՛ւ ամէն բան: Տեսէ՛ք, թէ նրա
ձեռքը ի՞նչ անպիտան տոյրեր է գորում
գրել իր երեկւայ ընկերների ու համա-
խոհների մասին. «Ինձ շատ վիշտ պատ-
նառեց նաեւ մի քանի գրողների ձեռ-
բակալութիւնը, որոնց մէջ ունէի անձ-
նական ընկերներ, բայց երբ վերադար-
ձայ Երեւան եւ հնար եղածի չափ ծա-
նօթացայ իրերի եւ իրադարձութիւննե-
րի հետ, տեսայ, որ մեր կռաւարու-
թիւնը (որին անպայման վստահում ենք)
եւ ժողովուրդը ուրիշ կերպ չէին կարող
վարել նրանց հետ»:

Գժտար է, ի հարկէ, մարդկօրէն

հեռուից քար նետել մէկի վրա այս կամ
այն արարքի համար, մանաւանդ, երբ
մէկը գտնուում է խորհրդային պայման-
ներում, բայց կամ դէպքեր, երբ նոյն
իսկ մահւան սպանակիքի տակ, մարդ
պարտաւոր է ազնիւ լինել: Մանաւանդ
Ա. Իսահակեանի պէս մէկը, որին բնու-
թիւնը տուել է տաղանդ եւ հասցրել է
բարձրագոյն դիրքերի. մի Սիւմ. Յակոբ-
եան կարող է այդքան ցած ընկնել, Ա.
Իսահակեանը իրաւունք չունի: Նա իրա-
ւունք չունի իր ընկերների դիակի վրա
իրեն համար անձնական բարեկեցութիւն
հաստատել. ընկերների արիւնով շա-
ղախւած հացը քոյրի պէս կը սպանէ
նրան բարոյապէս...

Այսքան արասպիելի է խորհրդային
իրականութիւնը: Եւ այդ դժոխքի մէջ
հայ գրականութիւնն էլ գալարւում է
անասելի ցաւերով: Մանաւանդ, ծանր է
կացութիւնը այս վերջին մէկ տարւայ
ընթացքում, երբ պարզապէս խելագա-
րութիւնն է տիրողը Հայաստանում: Այս
տեսակէտից ուշագրաւ է Հայաստանի
կոմկուսի վերջին 10-րդ համագումար-
ում պարզած պատկերը: Հայկումկու-
սի քարտուղար Աւետուհին, իր գեկուց-
ման մէջ, երկարօրէն խօսել է եւ Հա-
յաստանի գրականութեան ու արւեստի
մասին: *) Այդտեղից իմանում ենք, ի
միջի այլոց, որ, իբր թէ, «հանջեանի
յանձնարարութեամբ Հայկինոյում գու-
մարւել էր արւեստի աշխատողների ժո-
ղով, որտեղ դաշնակ Բակունցը եւ ու-
րիշներ, հանջեանի ցուցումով ... պա-
հանջում էին, որպէսզի կինօս բանուր-
ների եւ գիւղացիների յեղափոխական
կռիւն արտայայտող նկարների փոխա-
րէն ցուցադրի դաշնակ արւեստի ստի-
ների յարձակումն Օտտանեան Բանկի
վրա, առաջարկում էին կինօսկար պատ-
րաստել հակայեղափոխական դաշնակ
խմբապետ Անդրանիկի մասին»:

*) «Դրական Թերթ», յունիս 12:

իմանում ենք, որ հանջեանը հավանաբար է Ալագանին, Վանանդեցուն, Նորենցին, ինչպէս եւ «Նոյեմբեր» խմբակի պարագլուխներ Բակունցին, Մահարուն, Մ. Արմէնին եւ ուրիշներին, որոնց բուրբին միացրել է եւ «այդ բանդայի գլուխ կանգնեցրել լրտես Գ. Սիմոնեանին»: Այդ խմբակը «ծխտում էր Հայաստանում պրոլետարական գրականութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը եւ հնարաւորութիւնը, հայկական խորհրդային գրականութիւնը հակադրում էր ռուսական խորհրդային գրականութեան»: «Այդ մացիոնալիստական խմբակն սկսեց իր շուրջը համախմբել ինտելիգենցիայի հակախորհրդային, շովինիստական տարրերին՝ Բակունցը, Ալագանը, Վանանդեցին եւ ուրիշները որպէս հակալեզափոխական տրոցկիստական տեռորիստներ»:

Իմանում ենք նաեւ, որ «վերջերս Մկ. Արմէնը հրապարակով դատապարտեց իր անցեալ կապն այդ հակալեզափոխական խմբի հետ եւ իր անցեալ մացիոնալիստական գրածոները»: Որ «իր դիրքերի հակալեզափոխականութիւնը խստովանեց գրող Ե. Չարենցը», որը Հայկումկուսի կենտր. կոմիտէի անունով ուղարկած նամակում գրել է. «Ես նոյնիսկ չեմ կասկածում, որ իբօֆ իմ սխալներն ունեն մացիոնալիստական, հետեւաբար եւ (ստկում եմ ասել) հակախորհրդային էութիւն»: Ամատունին սաստում է Չարենցին. «Ժամանակն է, վերջապէս, որ Չարենցը լրիւ հաշիւ տայ իրեն իր ամբողջ ուղու մասին եւ դադարեցնի թէ՛ իր եւ թէ՛ գրականութեան հանդէպ երկերեսամութիւնները: Նա պէտք է հասկանայ, որ ամենից առաջ հարկաւոր է անկեղծութիւն»:

Ամատունուց իմանում ենք, վերջապէս, որ, «ներկայումս Աւ. Իսահակեանը մի պոէմ է գրում Վլադիմիր Իլիչի մասին, այդ գրածոքն հիմ ընդու-

նելով Լենինի մասին եղած ժողովրդական փառաբանը»:

Ամատունու գեկուցումից երեւում է, որ վերջին տարւայ ընթացում գրական ստեղծագործութիւնը Հայաստանում բոլորովին կանգ է առել, ո՛չ մի աչքի ընկնող երկ չի արտադրել: Հայ գրողները գրադած են իրենց աղտոտ լաթերը լանալով, փոխադարձ գգրտուհով, կամ իշխանութեան առջեւ ֆճնելով ու կուրօրէն վերից տրւած հրահանգները կատարելով: Մտքի ազատութեան վերջին նշոյլն իսկ վերացած է:

Բնորոշ է մի ուրիշ պարագայ: Մերժելով «ազգային յատկանշիների խտացման» տեսութիւնը եւ մախրող դեկլարարութեան վերաբերումը դէպի «անցեալի ժառանգութիւնը»՝ նոր դեկլարարութիւնը, ըստ էութեան, գնում է միեւնոյն ուղիով ինչ որ եւ հանջեանն ու Գր. Սիմոնեանը, եւ նոյն իսկ աւելի «ազգայնական - յետադիմական» դիրքեր գրաւում: Խանջեանի դեկլարարութիւնն էլ ընդունում էր Մ. Նալբանդեանի եւ Գ. Սունդուկեանի գրական արժէք. Ամատունիի դեկլարարութիւնը դրանց վրա աւելացնում է եւ Պերն Պոռշեանի, Ղ. Ազայեանի, Ալ. Ծատուրեանի եւ միջնադարեան Զրիկի անունները: Խանջեանի մարդիկ գոնէ գիտութիւն եւ գրական որոշ պատրաստութիւն ունէին եւ այս կամ այն հեղինակի արժէքի գընահատութեան ժամանակ ծանօթ էին այդ հեղինակի գործերին եւ կարողանում էին իրենց տեսակետների համապատասխան անուններ ընտրել: Պատահաբար չէ, որ նրանք առաջ ֆաշիցին Սայեաթ Նովայի, Խ. Աբովեանի, Մ. Նալբանդեանի, Յ. Թումանեանի, Յ. Պարոնեանի, Ե. Օտեանի եւ այլոց անունները: Ներկայ դեկլարարութիւնը բացարձակապէս սոցետ է եւ չգիտէ, թէ ի՛նչ է անում, հակառակ դէպքում առաջ չէին ֆաշի Պ. Պոռշեանն ու Ալ.

Ծատուրեանի անունները — առաջինը քունդ պահպանողական — ազգայնական մի գրող, երկրորդը՝ Գամառ Քաթիպայի տիպի ազգայնական բանաստեղծ — ի՛նչ ընդհանուր բան կայ հայ — բերիստոնեայ Պոռտեանի կամ «ճացիոնա-

լիստ» Ծատուրեանի ու բոլշեւիզմի միջեւ...

Այսպէս քէ այնպէս, սարսափելի է Հայաստանի գրականութեան ներկայ վիճակը:

Ս. Վ.Ր.

ՐԱՅՖԻԻ ՅՈՒՅԼ ԵՄԱՆԸ

Այս տարի արտասահմանի հայութիւնը տօնում է Բաֆֆիի ծննդեան հարիւրամեայ տարեդարձի յորելեանը: Այդ նպատակով զանազան վայրերում կազմած են յատուկ յանձնաժողովներ, որոնք պատրաստում են աշնանը հանդէսներ կատարել: Ստորեւ հրատարակուող Կոչը ծանօթացնում է Փարիզի յորելեանական ձեռնարկի բնոյթին. բացի գրական — երաժշտական հանդէսից, հոկտեմբեր 30-ին, որոշած է նաեւ հրատարակել մի ժողովածու՝ նւիրած Բաֆֆիի կեանքին ու գործին: Այդ նըպատակով կազմած է մի խմբագրական մարմին՝ բաղկացած հետեւեալ անձներէց. Տ. Կամարական, Տոքթ. Վ. Թորգոմեան, Լ. Բաշայեան, Հ. Վ. Յովհաննէսեան, Փրոֆ. Ն. Արմոց, Ս. Վրացեան (նախագահ), Ռ. Բերքերեան, Ծ. Միսաքեան, ԲԺ. Հ. Զարդարեան, Ղ. Մեյլոյեան, Հր. Սամուէլ, Հ. Բալուեան: Յանձնաժողովը դիմել է յիսունից աւելի մտաւորականների՝ խնդրելով գրել հիմնական ուսումնասիրութիւններ կամ յուշեր ու տպաւորութիւններ Բաֆֆիի մասին:

գրող իլիա Զաչաւաճէի յորելեանին. Բաֆֆին Զաչաւաճէի չափ է՛լ չկայ հայ բոլշեւիկների համար:



ԿՈՉ ՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Մեր ազգային մեծ վիպասան Բաֆֆիի Ծննդեան Հարիւրամեակի Յորելեանական Յանձնաժողովս, որ վերջը ընտրեցաւ «Համազգային» Ընկերութեան Փարիզի Կեդր. Վարչութեան հըրուէրով դուժարած հաւաքոյթի մը մէջ, որուն մասնակցեցան վարիդահայ մշակութային, հայրենակցական եւ մարդասիրական զանազան մարմիններու ներկայացուցիչներ, զխաւոր հայ թերթերու խմբաչիւրներ եւ յայտնի մտաւորական անձնաւորութիւններ, որոշեց, ըստ այդ հաւաքոյթի մէջ արտայայտած միահամուռ բաղձանքին, Փարիզի մէջ սարքել՝ ներկայ տարւան ընթացքին՝ Բաֆֆիի Ծննդեան Հարիւրամեակի յորելեանական մեծաշուք հանդէս մը՝ պատուելու համար Սամուէլի եւ Կայծերու անմահ հեղինակին գործն ու յիշատակը:

Հանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հոկտեմբեր 31ի Կիրակի օրը կէս օրէ յետոյ ժամը 2էն 6, «Mutualité» —ի մեծ սրահին մէջ, որ արդէն վարձուած է, եւ Յանձնաժողովս ամէն ջանք պիտի թափէ, որպէսզի հանդէսին յայտագիրը տօնախմբելիք մեծ դէժքին ար-

Կոչը դիմելուց առաջ, ցաւով արձանագրեմք նաեւ, որ Հայաստանը այս տօնակատարութիւններին չի մասնակցում. խորհրդային իշխանութիւնը մինչեւ այժմ մնալ էլ չի գշտել իր դիրքը դէպի մեծ յնչոյն հայ վիպասանի յորելեանը: «Գրական Թերթ»-ից ու «Նորհրդ. Հայաստան»-ից իմանում ենք, որ նրեւանը մասնակցել է վրացի ազգայնական